ՈՐՈՇՈՒՄ

23 դեկտեմբեր, 2021 թվականի № 64-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԵՎ ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՑԱՆՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 17-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված թիվ Ռ/21-01-125 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջին ծրագիր» լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հաստատել Ընկերության «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:

3. Հաստատել Ընկերության ««Արևիկ» մայրաքաղաքային սփռման» լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

4. Հաստատել Ընկերության «Հոգևոր-մշակութային» լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:

5. Հաստատել Ընկերության մշակութային առցանց լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի:

6. Հաստատել Ընկերության մերձավոր արևելքի և հարևան երկրներում օտարալեզու լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 6 հավելվածի:

7. Հաստատել Ընկերության հանրային ռադիո էյէմ լսողական ծրագրի՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 7 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

23 դեկտեմբեր, 2021 թվականի

ք. Երևան